ԻՖԼԱ-Ի ԻՆՏԵՐՆԵՏԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

Տեղեկատվության անարգել մուտքը էական է ազատության, իրավահավասարության, համընդհանուր փոխըմբռնման – խաղաղության համար: Այդ պատճառով ԻՖԼԱ-ն հայտարարում է, որ.

- Մտավոր ազատությունը յուրաքանչյուր անհատի կարծիք ունենալու – արտահայտելու, տեղեկատվություն փնտրելու – ստանալու իրավունքն է. այն ժողովրդավարության հիմնաքարն է – ընկած է գրադարանային ծառայությունների հիմքում:
- Տեղեկատվության ազատ մուտքի ապահովումը՝ անկախ դրանց տարածման միջոցներից – պետական սահմաններից, գրադարանային – տեղեկատվական մասնագետների գլխավոր պարտականությունն է:
- Գրադարանների – տեղեկատվական ծառայությունների կողմից Ինտերնետի անարգել մուտքի տրամադրումը օգնում է համայնքներին – անհատներին ձեռք բերել ազատություն, ծաղկում – զարգացում:
- Տեղեկատվության տարածման խոչընդոտները պետք է վերացվեն – հատկապես՝ անհավասարությանը, աղքատությանը – հուսահատությանը նպաստող:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՏԵՐՆԵՏԸ, ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները փոփոխություններին միտված հաստատություններն են, որոնք մարդկանց կապում են գլոբալ տեղեկատվական պաշարներին, գաղափարներին – ստեղծագործական աշխատանքներին, որ նրանք փնտրում են: Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները, օգտագործելով տեղեկույթի բոլոր միջոցները, մատչելի են դարձնում մարդկային իմացության հարստությունը – մշակութային բազմազանությունը:

Ինտերնետ համաշխարհային ցանցը հնարավորություն է ընձեռնում անհատներին – համայնքներին, անկախ այն բանից, թե նրանք ամենափոքր – առավել հեռավոր գյուղերում կամ խոշորագույն քաղաքներում են բնակվում, ստանալ տեղեկատվական մուտքի հավասար հնարավորություն անձի զարգացման, կրթության, խթանման, մշակութային զարգացման, տնտեսական գործունեության – ժողովրդավարության գործընթացներում տեղեկացված մասնակցության համար:

Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները ապահովում են Ինտերնետի մուտքի կար–որ հնարավորություն: Որոշ օգտվողների նրանք առաջարկում են հարմարավետություն, ցուցումներ – օգնություն, մինչդեռ ուրիշների համար դրանք ինտերնետի միակ մատչելի վայրերն են: Նրանք մեխանիզմ են առաջարկում հաղթահարելու խոչընդոտները, որ ստեղծում են պաշարների, տեխնոլոգիաների – ուսուցման տարբերությունները:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ

Ինտերնետի – նրա բոլոր պաշարների մուտքի ապահովումը պետք է համապատասխանի Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հռչակագրին – հատկապես նրա 19-րդ հոդվածին.

«Յուրաքանչյուր ոք համոզմունքների ազատության – դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու – լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից»:

Ինտերնետի համընդհանուր փոխկապվածությունը մի հնարավորություն է, որի միջոցով այդ իրավունքից կարող են օգտվել բոլորը: Հետ–աբար Ինտերնետի մուտքը չի կարող ենթարկվել ոչ

գաղափարական, քաղաքական կամ կրոնական գրաքննության, ոչ էլ տնտեսական սահմանափակումների:

Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները պատասխանատվություն են կրում սպասարկելու իրենց համայնքի բոլոր անդամներին՝ անկախ նրանց տարիքից, ռասսայական պատկանելությունից, ազգությունից, կրոնից, մշակույթից, քաղաքական հայացքներից, ֆիզիկական կամ այլ հաշմությունից, սեռից կամ սեռական կողմնորոշումից կամ որ–է այլ հատկանիշից:

Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները պետք է պաշտպանեն օգտվողների տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները պետք է հարգեն իրենց օգտվողների անձնական կյանքի իրավունքը – ճանաչեն նրանց օգտագործած պաշարների գաղտնիությունը: Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները պատասխանատու են հանրությանը տրամադրելու մուտք դեպի որակյալ տեղեկատվություն – հաղորդակցության միջոցներ: Օգտվողներին պետք է օգնել ստանալու անհրաժեշտ ունակություններ – ապահովել համապատասխան միջավայր, որտեղ նրանք կկարողանան ազատորեն – ապահով օգտվել իրենց ընտրած տեղեկատվական պաշարից – միջոցից:

Ի հավելումն Ինտերնետի շատ արժեքավոր պաշարների, դրանց մի մասը ոչ ճիշտ է, մոլորեցնող – կարող է լինել վիրավորական: Գրադարանավարները պետք է գրադարանից օգտվողներին տրամադրեն տեղեկատվություն – սովորեցնեն նրանց, թե ինչպես գործնական – արդյունավետ օգտագործեն Ինտերնետը – էլեկտրոնային պաշարները: Նրանք պետք է ակտիվորեն առաջ քաշեն – դյուրացնեն մուտքը դեպի որակյալ ցանցային տեղեկատվություն իրենց օգտվողների համար՝ ներառելով մանուկներին – պատանիներին:

Ընդհանուր առմամբ գրադարանի մյուս հիմնական ծառայությունների հետ միասին Ինտերնետի մուտքը գրադարաններում – տեղեկատվական ծառայություններում պետք է լինի անվճար:

ՀՌՉԱԿԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ԻՖԼԱ-ն կոչ է անում միջազգային համագործակցությանը՝ աջակցելու Ինտերնետի մատչելիության ընդլայնմանը աշխարհում – հատկապես զարգացող երկրներում – այդ կերպ օգուտ քաղելու Ինտերնետի տրամադրած տեղեկատվության արդյունքներից:

ԻՖԼԱ-ն կոչ է անում ազգային կառավարություններին՝ զարգացնելու ազգային տեղեկատվական ենթահամակարգերը, որը Ինտերնետի մուտքի հնարավորություն կտա երկրի ամբողջ բնակչությանը:

ԻՖԼԱ-ն կոչ է անում բոլոր կառավարություններին՝ գրադարանների – տեղեկատվական ծառայությունների միջոցով անարգել աջակցել Ինտերնետի միջոցով տարածվող տեղեկատվությանը – հակազդել գրաքննության – տեղեկատվության մուտքի սահմանափակման բոլոր դրս–որումներին:

ԻՖԼԱ-ն առաջարկում է գրադարանային հանրությանը – ազգային ու տեղական մակարդակում որոշում ընդունողներին՝ մշակելու առանձնահատուկ ռազմավարություն, քաղաքականություն – ծրագրեր, որ կօգնեն իրականացնել այս Հռչակագրում արտահայտված սկզբունքները:

Թարգմ.՝ Ներսես Հայրապետյան